

Ցեղասպանության քաղաքականությունը և Թուրքիա-Հայաստան արձանագրությունները

Ցեղասպանության բոլոր դեպքերը պետք է դիտարկվեն որպես համաշխարհային պատմության մաս: Եթե հավատում ենք “Այլևս երբեք” կարգախոսին և ցանկանում ենք կանխարգելել ցեղասպանություններն ապագայում, պետք է այս դարակազմիկ իրադարձություններին վերաբերվենք որպես համընդհանուր կենսափորձի մաս և բոլորիս անհանգստության առարկա:

Նյու Յորք Թայմզի հոկտեմբերի 18-ի համարում Դանիել Գոլդհագենի նոր գրքի գրախոսության մեջ, որը վերնագրած է *Պատերազմից էլ վատ. Ցեղասպանությունը, բացառումը և մարդկության նկատմամբ շարունակվող վիրավորանքը*, Ջեյմս Թրաուբը գրում է.

Սակայն զանգվածային ջարդերի դուրս թողնումը գիտակցական գործողությունների տիրույթից ինքնին դառնում է արդարացում և՛ մարդասպանների, և՛ մեզ համար, ասել է թե ինչպե՞ս մենք՝ հասարակ ժողովուրդս, ովքեր գնահատում են կյանքը, կարող էինք գնալ այդպիսի խելագարության: Այսպիսի ազդեցիկ և խորապես անհանգստացնող զանգվածային ջարդերի “բնական պատմությամբ” Դանիել Ջոնսահ Գոլդհագենը կոչ է անում վերջ տալ նման գիտակցված կուրությանը... Գոլդհագենը պնդում է, որ նույնիսկ ամենավատ դաժանությունները ծնվում, այնուհետև իրագործվում են մի շարք բավականին գիտակցված հաշվարկների հիման վրա որքան առաջնորդների, այնքան էլ հետևորդների կողմից: “Մենք այլևս պետք է վերջ տանք զանգվածային ոչնչացումն ու դրա տարատեսակ հանդիսացող զանգվածային սպանությունը քաղաքականության մեր ըմբռնումներից տարանջատելուց”, գրում է Գոլդհագենը... Դաժանությունները հիշեցնում են մեկը մյուսին; Դրանց տարբերությունները դրսևորվում են իրագործողների գաղափարախոսության, մաքրագերծված աշխարհի մասին նրանց բնորոշ պատրանքի և ոչնչացման ենթակա գոհերի մասին իրենց հայացքներով...

Սակայն եթե մեր վեջնական նպատակն է վստահ լինել, որ Ռուանդայի նման ցեղասպանությունների դեպքում այլևս երբեք չենք լինելու դիտորդի դերում, հանրային կարծիքը չպետք է կառուցվի ազգային շահերի խիստ հաշվարկմամբ, այլ խղճի կանչով... Նա հեզանքով պախարակում է Միացյալ Ազգերի Կազմակերպությանը, որի ինքնավարության նկատմամբ հարգանքի և ներքին գործերին չխառնվելու հիմնարար սկզբունքները, ինչպես ինքն է արդարացիորեն մատնանշում, որպես վահան են ծառայել Սուդանում և այլուր այն առաջնորդների համար, որոնք հակված են կոտորելու իրենց սեփական ժողովրդին:

Մամուլի հրապարակումն այս խնդրի շուրջ հետաքրքիր է ինչպես թուրք-հայկական արձանագրությունների ստորագրումից առաջ, այնպես էլ հետո: Առաջանում է մի անընդհատ ծամծամվող թեմա հատկապես այն երկրներում, որոնք դեռևս պաշտոնապես չեն ճանաչել 1915թ.-ին հայերի նկատմամբ իրագործված զանգվածային ջարդը որպես ցեղասպանություն. այն է՝ Հայաստանի և Թուրքիայի միջև առկա վեճը Ցեղասպանության շուրջ բացառապես իրենց խնդիրն է: Օրինակ, ԲիԲիՍի-ն 2009թ.-ի հոկտեմբերի 10-ի Արձանագրությունների մասին իր գեկույցում նշում էր, որ արդյունքում՝ հայերն ասում են, որ դա ցեղասպանություն էր, իսկ Թուրքիան ասում է՝ ցեղասպանություն չէր, ուստի ընթերցողը չգիտի ինչին հավատա.

Հայերը քարոզարշավ են կազմակերպել՝ այդ սպանությունները միջազգայնորեն որպես ցեղասպանություն ճանաչելու ուղղությամբ, և ավելի քան 20 երկրներ արդեն ճանաչել են այն: Թուրքիան ընդունում է, որ բազմաթիվ հայեր են սպանվել, սակայն նշում է, որ նրանց մահը պայմանավորված էր Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ընթացող լայնածավալ մարտերով:

Դեռևս 2005թ.-ին մարդու իրավունքների ճանաչված ակտիվիստ և Նոբելյան մրցանակի դափնեկիր Էլի Ուիսելը բնութագրում էր հայ-թուրքական հարաբերությունների դժվարությունը, քանի որ “ժառանգական ստեղծությունը դժվար է ջնջել”: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ երկու երկրների միջև եղած հիմնախնդիրն ավելի շուտ անուղղելի դարավոր պատմությունն է, քան մի քաղաքական հիմնախնդիր, որն առաջացել է կոնկրետ պատմական իրադարձությունից՝ 1915թ.-ին Օսմանյան Թուրքիայի կողմից իրագործված Հայոց Ցեղասպանությունից:

2009թ.-ի ապրիլի 9-ին, երբ նախագահ Բարաք Օբաման Թուրքիայում էր, ինքն իրեն հեռացնելով հայ-թուրքական խնդիրներին ուղղակիորեն միջամտելուց, նշեց.

Ես ցանկանում եմ լինել այնքան քաջալերող, որքան հնարավոր է այս բանակցությունների հարցում, որոնք ընթանում են և կարող են արագորեն, շատ շուտով արգասաբեր լինել: Եվ որպես հետևանք, այն ինչ ցանկանում եմ անել ոչ թե կենտրոնանալն է իմ հայացքների վրա, այլ կենտրոնանալն է թուրք և հայ ժողովուրդների հայացքների վրա, եթե նրանք կարող են առաջ անցնել և դեմ առ դեմ կանգնելով իրենց դժվար և ողբերգական պատմությանը լուծում գտնել, կարծում եմ այդ ժամանակ ամբողջ աշխարհը պետք է խրախուսի նրանց: Ուստի այն, ինչ ասել եմ նախագահին, հետևյալն է, որ ես ցանկանում եմ լինել այնքան կառուցողական որքան հնարավոր է այս խնդիրներն արագորեն առաջ մղելու հարցում: Եվ իմ գնահատմամբ դրանք արագորեն ընթանում են առաջ: Որպես Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ՝ ես չեմ ցանկանում առաջ ընկնելով բացահայտել հարցի կարգավորման հնարավոր տարբերակներ կամ անել հայտարարություններ, որ մոտ ապագայում հրարավոր է որ արվեն: Ես միայն ցանկանում եմ նշել, որ այս հարցերի լուծման ուղղությամբ մենք հանդես ենք գալու որպես գործընկեր այնպես, որ կարևորագույն կողմերը՝ թուրքերն ու հայերը, ամենակառուցողական եղանակով վերջապես հանգեն ընդհանուր հայտատարի:

Թվում է, թե կա որոշակի տեսակետ, որը հաղթանակած հայտարարում է, որ միայն Թուրքիան և Հայաստանն իրավունք ունեն շահագրգռված լինելու Հայոց Ցեղասպանության մեջ և դա ոչ մի այլ կողմի խնդիրը չէ:

Հետաքրքիր է, արդյոք Ռուանդայի ցեղասպանությունը կարելի՞ է բնութագրել որպես միայն հույսերի և թուփսիների քննարկման առարկա: Ռուանդայի իրավիճակի բարդություններն, օրինակ, ներառում էին Բելգիան, Ֆրանսիան, Բուրունդին, Ուգանդան, Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետությունը, ԱՄՆ-ը և ՄԱԿ-ը: “Ցեղասպանություն” բառից խուսափելու նպատակով ԱՄՆ աղավաղումները 1994թ.-ին, և ցեղասպանության անխուսափելիության մասին գեներալ Դալերի նախագուշացումն ընդունելու ՄԱԿ-ի մերժումը, որն արվում էր, որպեսզի խուսափեին ներգրավվել այդ խնդիրների մեջ, բավականին լավ հիմնավորված են փաստերով: Այսպիսի ակնհայտ քաղաքական մանիպուլյացիան վրդովմունք առաջացրեց շատերի մոտ, և այն տառապանքը, որ առաջ եկավ 800,000 զոհերի դաժան սպանություններից, ստիպեց մեզ կիսել այդ ծանր ցավը մեզ նման մարդկային էակների հետ: Ցեղասպանության սարսափը, երբ մի խմբի տղամարդիկ, կանայք,

երեխաներն ու ծերերը թիրախի տակ էին վերցվել ոչնչացվելու նպատակով, միջազգային իրավունքի բացահայտ խախտում էր և ցուցադրվում էր հեռուստատեսության էկրաններից բորոքիս տուն բերելով այդ անարդարությունը: Որոշ մարդկանց համար, թերևս, ավելի հեշտ էր ուղղակի դիտորդ լինել այդ ցեղասպանությանը, սակայն ոչ ոք այսօր չի կարող պնդել, որ այդ ողբերգությունը միայն հույժների և թուխսիների գործն է:

Նույնը ճիշտ է նաև Հոլոքոստի և Հայոց Ցեղասպանության պարագայում: Իրականում Հայոց Ցեղասպանությունը գիտնականների կողմից ճանաչված է որպես ժամանակակից ցեղասպանության արխետիպ, որի դասերն ունեցել են համաշխարհային կիրառություն: Դասերից մեկը, որ մասնավորապես կապվում է Հայոց Ցեղասպանության հետ, այն է, թե ինչպես է հանցագործության ժխտումը խրախուսում ապագա ցեղասպանություն իրագործողներին, ինչպես օրինակ հայտնի է Ադոլֆ Հիտլերի և Ալբերտ Մայրի մասին: Որպեսզի կարողանանք կանխարգելել ցեղասպանությունն ապագայում, մենք պետք է բարձրացնենք ցեղասպանության որպես մարդկության աղետի մասին տեղեկացվածությունը և մեր հասարակություններում ուսուցանենք դրա մասին: Մենք պետք է պայքարենք ցեղասպանության ցանկացած դեպքի արժեքը նսեմացնելու կամ անտեսման ցանկացած փորձի դեմ: Այն պահից, երբ զիջում ենք որևէ ցեղասպանության համամարդկային նշանակությունը, ցեղասպանության կանխարգելման ողջ համաշխարհային ջանքերը հօդս են ցնդում:

Ցեղասպանության կանխարգելումն ու խոսքի և մտքի ազատության երաշխավորումը սահմանված են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում և ՄԱԿ-ի Ցեղասպանության կանխարգելման և պատժի մասին կոնվենցիայում: Այս հիմքի վրա է, որ Չորյան ինստիտուտը նվիրվել է ցեղասպանության մասին տեղեկացվածության բարձրացմանը և դրա կանխարգելման անհրաժեշտությանն ու համամարդկային իրավունքների խթանմանը: Սրանք այն սկզբունքներն են, որոնք արտացոլված են Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի 2001թ.-ի մեր զեկույցում, 2005թ.-ին պատմաբանների հանձնաժողով ստեղծելու վարչապետ Էրդողանի առաջարկին ի պատասխան իրեն հասցեագրված մեր բաց նամակում, 2006թ.-ին Ֆրանսիայում ցեղասպանության ժխտումը որպես հանցագործություն ճանաչելու օրենսդրական առաջարկին ընդդեմ մեր հայտարարության մեջ, 2009թ.-ի մարտին Օլբրայթ-Քոհեն Ցեղասպանության կանխարգելման հատուկ հանձնաժողովի հաշվետվության շուրջ (որն այլ հարցերի շարքում հիմնված էր կեղծ դրույթների և անցյալ պատմության անտեսման վրա) մեր համակազմակերպած գիտաժողովում և անցյալ ամիս Արձարագրությունների վերաբերյալ նախագահ Սարգսյանին հասցեագրված մեր բաց նամակում:

Մեր դիրքորոշումն արձարագրությունների շուրջ այն է, որ համոզված լինենք, որ Հայոց ցեղասպանության անվիճելիությունը ոչ անտեսված է, ոչ էլ կասկածի տակ է դրված: Այս նկատառմամբ ենք գրել նախագահ Սարգսյանին.

...բազմաթիվ առաջադեմ պատմաբաններ, քաղաքագետներ, սոցիոլոգներ, իրավագետներ, ինչպես նաև մի շարք հեղինակավոր ինստիտուտներ բազմաթիվ անգամ ուսումնասիրել են Ցեղասպանությունը, հրատարակել մի շարք ակադեմիական հոդվածներ ու գրքեր և նույնիսկ

հանդես են եկել հանրային հայտարարություններով: Այս գիտնականներն իրենց մասնագիտական կյանքը նվիրել են ակադեմիական ազնվության բարձրագույն մակարդակով գիտական հետազոտություններ անցկացնելուն: Իրենց հետազոտությունների արդյունքում այս գիտնականները հայոց ցեղասպանությունը համարում են ժամանակակից ցեղասպանությունների արխետիպը, որի կազմակերպման և իրագործման մոդելը մի շարք նմանություններ ունի հետագա դեպքերի հետ:

Այն, թե ինչ են անում կամ ինչի շուրջ են համաձայնում հայկական և թուրքական կառավարությունները որպես երկու ինքնավար ազգեր, իրենց իրավասությունն է: Սակայն մեր խնդիրն է բարձրացնել այս արձանագրություններում ներգրավված բոլոր կողմերի (երկու ստորագրող երկրների, ԵԱՀԿ երեք վրեհակող երկրների՝ ԱՄՆ, Ռուսաստանի և Ֆրանսիայի, և ԵՄ ներկայացուցչի) տեղեկացվածությունը, որ Հայոց Ցեղասպանությունը պատմական փաստ է, համամարդկային կենսափորձի մասն է և որևէ փոխզիջման ենթակա չէ:

Ավելին, այս ցեղասպանությունը հերքելու, այս ահավոր հանցագործությունը պարզունակ դարձնելու կամ որպես Թուրքիայի և Հայաստանի միջև առկա մի հարց դիտարկելու ցանկացած փորձ խստորեն քննադատվելու է այս ոլորտի գիտնականների, իրավաբանների և մարդու իրավունքների ակտիվիստների կողմից: Վերջերս պրոֆ. Ուիլիամ Շաբասի կողմից գրված ներքոհիշյալ բաց նամակը այս որոշման ցայտուն վկայությունն է.

Հարգելի վարչապետ Էրդողան և նախագահ Սարգսյան.

Հայաստանի և Թուրքիայի միջև առաջարկված արձանագրությունները պահանջում են ստեղծել “անկողմնակալ պատմական հանձնաժողով,” որն ուսումնասիրելու է այն, ինչ հայտնի է ողջ աշխարհին որպես 1915թ.-ի Հայոց Ցեղասպանություն:

Որպես առաջատար գիտական կազմակերպություն, որը ներգրավված է ցեղասպանության ուսումնասիրություններում, մենք ողջունում ենք շարունակական ուսումնասիրությունը, որ կընդլայնի 1915թ.-ի ջարդերի մասին մեր ըմբռնումը: Սակայն մենք մեծապես զգուշանում ենք այնպիսի հարցերի շուրջ իբրև թե անկողմնակալ հետազոտություններից, որոնք արդեն հստակորեն հաստատված պատմական փաստեր են:

Հայոց Ցեղասպանության ճանաչումը պետք է հանդիսանա ցանկացած “անկողմնակալ պատմական հանձնաժողովի” մեկնակետը, այլ ոչ թե դրա հնարավոր եզրահանգումներից մեկը: Աշխարհը չի ընդունի որևէ կասկած ո՛չ նացիստական Հոլոքոստի, ո՛չ Ռուսանդայում թուրքերի ոչնչացման ճշմարտության նկատմամբ, և ոչ էլ այն կարող է ընդունել հայերի ցեղասպանության դեպքում:

Ուիլիամ Շաբաս,

Նախագահ,

Ցեղասպանության գիտնականների միջազգային ընկերակցություն

1915թ.-ին մոտավորապես 1.5 միլիոն հայեր կոտորվեցին՝ Օսմանյան Կայսրության ներքին խնդիրներին միջամտելու մեծ երկրների քաղաքականության և Առաջին համաշխարհային պատերազմի պատմական ֆոնի պայմաններում: Մինչ 1915թ.-ի մայիսի 24-ին Դաշնակից Երկրները (Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը) զգուշացնում էին Օսմանյան առաջնորդներին, որ իրենք պատասխանատվության են ենթարկվելու “մարդկության դեմ հանցագործությունների” համար, ԱՄՆ դեսպան

Հենրի Սորգենթաուն 1915թ.-ի հունիսի 16-ին նկարագրում էր այն, ինչ տեղի էր ունենում որպես “ազգային բնաջնջում”: Ռաֆայել Լեմկինը՝ այն իրավագետը, որ շրջանառության մեջ մտցրեց “ցեղասպանություն” եզրը 1944թ.-ին, նկարագրելով իր անձնական հիշողությունը, թե ինչպես ներգրավվեց այս ուսումնասիրություններում, գրում էր.

Ես ավելի ու ավելի էի նույնացնում ինքս ինձ այն զոհերի տառապանքների հետ, որոնց թիվն աճում էր, և շարունակում էի պատմության ուսումնասիրությունը: Ես հասկացա, որ հիշողության գործառնությունը ոչ միայն անցյալի իրադարձությունների գրառումն է, այլ նաև մարդկային խղճի խթանումը: Շուտով հետևեցին ցեղասպանության ժամանակակից օրինակները, ինչպիսին էր հայերի բնաջնջումը:

Մենք նշում ենք, որ Արձանագրությունների ստորագրման արարողության դիտորդները՝ Ռուսաստանը, Ֆրանսիան, Եվրոպական Միությունը և Շվեյցարիան (բանակցությունների միջնորդ կողմը), արդեն ճանաչել են Հայոց Ցեղասպանությունը իրենց համապատասխան խորհրդարանների միջոցով: ԱՄՆ-ը, որի պաշտոնական դիվանագիտական արխիվը Հայոց Ցեղասպանության ամենահարուստ աղբյուրներից մեկն է, ինքնին ստիպված է լինելու վերջապես դադարեցնել զիջել ճշմարտությունը քաղաքական նպատակահարմարությանը: Նախագահ Ռոնալդ Ռեյգանը 1981թ.-ին անվանել է այն ցեղասպանություն: Նախագահ Ջորջ Ու. Բուշը 2004թ.-ին այն նկարագրել է որպես “բռնի տեղահանումների և սպանությունների արդյունքում ավելի քան 1.5 միլիոն հայերի բնաջնջում Օսմանյան Կայսրության վերջին տարիներին”: Նախագահ Օբաման 2008թ.-ի հունվարին նշել է.

Ես ամերիկահայերի հետ, որոնց մեծ մասը ցեղասպանության վերապրողների սերունդներ են, նույնպես կիսում եմ սկզբունքային նվիրվածությունը ցեղասպանության հիշատակմանը և վերջ տրմանը: Դա սկսում է համաշխարհային պատմության մեջ ցեղասպանության ողբերական դեպքերի ճանաչմամբ: Որպես ԱՄՆ սենատոր՝ ես կանգնած էի ամերիկահայ համայնքի կողքին Թուրքիայից պահանջելու ճանաչել հայոց ցեղասպանությունը: Երկու տարի առաջ ես քննադատել եմ պետքարտուղարին՝ Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Էվանսին աշխատանքից այն պատճառով ազատելու համար, որ վերջինս պատշաճ կերպով օգտագործել էր “ցեղասպանություն” եզրը հազարավոր հայերի կոտորածը Թուրքիայի կողմից նկարագրելու համար, որը սկսվել էր 1915-ից: Ես պետքարտուղար Ռայսի հետ կիսել եմ իմ խիստ համոզմունքը, որ Հայոց Ցեղասպանությունը զրպարտում, անձական կարծիք կամ տեսակետ չէ, այլ ավելին՝ լայնորեն փաստարկված իրողություն է, որ հիմնված է հսկայածավալ պատմական վկայությունների վրա: Փաստերն անհերքելի են: Այն պաշտոնական քաղաքականությունը, որ պահանջում է դիվանագետներին աղավաղել պատմական փաստերը, անպաշտպանունակ քաղաքականություն է: Որպես սենատոր՝ ես մեծապես աջակցում եմ Հայոց Ցեղասպանության մասին բանաձևի անցկացմանը և որպես նախագահ՝ ես կճանաչեմ հայոց ցեղասպանությունը:

Բայց և այնպես, մենք այն կարծիքին ենք, որ չնայած թուրքերն այսօր մեղավոր չեն Ցեղասպանությունն իրագործելու մեջ, նրանք պատասխանատու են, քանի որ ընդունում և թույլ են տալիս Թուրքիայի պաշտոնական պետական ժխտումը: Ժխտումը համարվում է ցեղասպանության վերջին փուլը, որը շարունակում է իր զոհը դարձնել վերապրողներին և նրանց սերունդներին՝ ավելի խորացնելով այն բաց վերքը, որ չի կարող բուժվել: Այն անգնահատելի ցավը, որ հայն է զգում, չի տարբերվում այն ցավից, որ հրեան, լեհը կամ գնչուն է զգում այն մարդկանց պատճառով, ինչպիսին է, օրինակ, Իրանի նախագահ Ահմադինեժադը, որը ժխտում է

Երկրորդ համաշխարհային պատերազմի Հոլոքոստը, կամ ինչպես թութսին է զգում, երբ Ռուսնդայի ցեղասպանությունն է ժխտվում:

Որպես եզրակացություն՝ անհրաժեշտ է նշել, որ Հայոց Ցեղասպանությունը համաշխարհային պատմության մի մասն է: Եթե ցանկանում ենք կանխարգելել ցեղասպանություններն ապագայում, ապա մենք պետք է ցեղասպանության բոլոր դեպքերին վերաբերվենք որպես համամարդկային կենսափորձի մաս և բոլորիս անհանգստության առարկա: